ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գավառի պետական համալսարանում
պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից
ուսանողների բավարարվածության գնահատման հարցման
արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2024թ. հուլիսի 4-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝ Հայրապետյան Ք.,
Նախրատյան Մ.,
Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը 4
II. Հարցման մեթոդաբանությունը 4
III. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատում.....5
IV. Եզրակացություններ և առաջարկություններ 17

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա և հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը՝ միտված ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

III. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատում

ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատի առկա և հեռակա բաժինների և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պրակտիկայում գտնվող 231 ուսանողից հարցմանը մասնակցել է 138-ը (59%):

1. Ընդհանուր տեղեկություններ.

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների, մասնագիտությունների և կուրսերի.

Ֆակուլտետ, բաժին, կուրս		Պրակտիկայում գտնվող ուսանողների ընդհանուր թիվը	Հարցմանը մասնակիցների թիվը	Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը
Հումանիտար մասնագիտությունների		**110**	**71**	**64%**
Հայոց լեզու և գրականություն 3-րդ կուրս	Առկա բակալավր	8	7	87%
Հայոց լեզու և գրականություն 4-րդ կուրս		8	5	62%
Անգլերեն լեզու և գրականություն 3-րդ կուրս		8	5	62%
Անգլերեն լեզու և գրականություն 4-րդ կուրս		9	6	66%
Իրավագիտություն 4-րդ կուրս		6	3	50%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 2-րդ կուրս		3	3	100%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 3-րդ կուրս		7	7	100%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ		8	6	75%
Իրավագիտություն 5-րդ կուրս	Հեռակա բակալավր	17	5	29%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 5-րդ կուրս		17	12	70%
Պատմություն 5-րդ կուրս		4	3	75%
Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս	Մագիստրատուրա	2	2	100%
Իրավագիտություն 2-րդ կուրս		6	3	50%

Պատմություն 2-րդ կուրս		2	1	50%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 2-րդ կուրս		5	3	60%
Բնագիտատնտեսագիտական		**121**	**67**	**55%**
Սերվիս 1-ին կուրս	Առկա բակալավր	5	3	60%
Սերվիս 2-րդ կուրս		5	4	80%
Սերվիս 4-րդ կուրս		6	3	50%
Համակարգչային ճարտարագիտություն 3-րդ կուրս		4	2	50%
Համակարգչային ճարտարագիտություն 4-րդ կուրս		7	5	71%
Դեղագործական քիմիա 3-րդ կուրս		3	1	33%
Դեղագործական քիմիա 4-րդ կուրս		4	2	50%
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 3-րդ կուրս		14	10	71%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 3-րդ կուրս		3	1	33%
Տնտեսագիտություն 3-րդ կուրս		4	2	50%
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 4-րդ կուրս		11	9	81%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 4-րդ կուրս		3	2	33%
Տնտեսագիտություն 4-րդ կուրս		6	3	50%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 5-րդ կուրս	Հեռակա բակալավր	16	6	37%
Համակարգչային ճարտարագիտություն 5-րդ կուրս		3	1	33%
Կենսաբանություն 5-րդ կուրս		5	4	80%
Սերվիս 5-րդ կուրս		2	0	0%
Քարտեզագրություն և կադաստրային գործ 5-րդ կուրս		3	2	66%
Համակարգչային ճարտարագիտություն 2-րդ կուրս	Մագիստրատուրա	2	0	0%
Կենսաբանություն 2-րդ կուրս		3	1	33%
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ 2-րդ կուրս		6	3	50%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ճյուղերի/ 2-րդ կուրս		4	2	50%
Տնտեսագիտություն 2-րդ կուրս		2	1	50%
Ընդամենը		**231**	**138**	**59%**

Աղյուսակից ակնհայտ է դառնում որ, ըստ ֆակուլտետների պրակտիկայում գտնվող ուսանողների թվաքանակի, հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողները:

Ըստ պրակտիկայի տեսակի

Գծապատկեր 1.



Գծապատկերից պարզ է դառնում է, որ ընդհանուր հարցվողների 39%-ը մանկավարժական պրակտիկայի մասնակիցներ են, 19%-ը՝ նախաավարտական պրակտիկայի, 16%-ը՝ արտադրական պրակտիկայի, 14%-ը՝ ուսումնական, 12%-ը՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկայի մասնակիցներ:

Արդյունքում, 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում մանկավարժական պրակտիկայում գտնվող 72 ուսանողից հարցմանը մասնակցել է 54-ը (75%), նախաավարտական պրակտիկայում գտնվող 53 ուսանողներից՝ 25-ը (47%), արտադրական պրակտիկայում գտնվող 43 ուսանողներից՝ 23-ը (53%), ուսումնական պրակտիկայում գտնվող 31 ուսանողներից՝ 20-ը (64%), գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկայում գտնվող 32 ուսանողներից՝ 16-ը (50%):

2. Ո՞ր կազմակերպությունում եք անցկացրել Ձեր պրակտիկան:

Հարցվողները նշել են հետևյալ կազմակերպությունները.

1. Գավառի պետական համալսարան
2. ՀՀ քննչական կոմիտե
3. ՀՀ քննչական կոմիտեի Մարտունու բաժին
4. ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչություն
5. ՀՀ քննչական կոմիտեի Նոր Նորքի քննչական բաժին
6. Զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժին
7. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
8. «ՔԿԱԳ» ծառայություն
9. Փաստաբանական կազմակերպություն
10. Գավառի համայնքապետարան
11. Գավառի ավագ դպրոց
12. Գավառի թիվ 1 հիմնական դպրոց
13. Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց
14. Գավառի թիվ 4 հիմնական դպրոց
15. Գավառի թիվ 5 հիմնական դպրոց
16. Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոց
17. Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց
18. Նորատուսի թիվ 3 միջնակարգ դպրոց
19. Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց
20. Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց
21. Գեղարքունիքի միջնակարգ դպրոց
22. Ծովազարդի միջնակարգ դպրոց
23. Սևանի Յ. Զարոբյանի անվան հիմնական դպրոց
24. Սևանի թիվ 4 հիմնական դպրոց
25. Լճաշենի Ա. Տեր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց
26. Վարսեր գյուղի միջնակարգ դպրոց
27. Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց
28. Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոց
29. Սարուխանի թիվ 3 միջնակարգ դպրոց
30. Մարտունու թիվ 2 միջնակարգ դպրոց
31. Վ. Գետաշեն թիվ 1 միջնակարգ դպրոց
32. Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոց
33. Արտաշատի Հ.Կտրակյանի անվան հիմնական դպրոց
34. «Վաղաշենի Մանկապարտեզ» ՀՈԱԿ
35. «Գավառի ԲԿ» ՓԲԸ
36. «Արարատբանկ» ԲԲԸ

37. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
38. «Ակբա բանկ» ԲԲԸ
39. «Արեգակ ՈՒՎԿ» ՓԲԸ
40. «ԱՄԻՕ» բանկ» ՓԲԸ
41. «Ինտերնետ կոմունիկացիոն ցանցեր» ՍՊԸ
42. Մարտունի քաղաքային համայնքի «Թիվ 1 կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ
43. Դեղատուն

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Գնահատումն իրականացվել է 1-5 միավորանոց համակարգով, որտեղ 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, 1-ը՝ ամենացածր:

4.1. Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար:

Գծապատկեր 2.



Հարցվողների 94%-ը՝ 129 ուսանող, նշել է, որ պրակտիկայի նպատակը հստակ էր իրենց համար, 5%-ը՝ 7 ուսանող, հարցին տվել է 4 միավոր, 1,3%-ը՝ 2 ուսանող, հարցին տվել է 3 միավոր: 1,2 միավորներ չեն նշվել:

Ցածր միավորներ հիմնականում նշվել են հեռակա բաժնի «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտության ուսանողների կողմից:

4.2. Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների և հմտությունների զարգացման առումով:

Գծապատկեր 3.



Հարցվողների 86%-ը՝ 118 ուսանող, նշել է, որ պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների և հմտությունների զարգացման տեսանկյունից, 12%-ը՝ հարցին տվել է 4 միավոր, այսինքն՝ պրակտիկան ոչ ամբողջությամբ է բավարարել գործնական կարողությունների և հմտությունների զարգացման առումով: 3 միավոր հատուկենտ նշվել է առկա բաժնի «Սերվիս» մասնագիտության 1-ին և «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» մասնագիտության 4-րդ կուրսերի ուսանողների կողմից:

4.3. Պրակտիկան պատշաճ էր կազմակերպված:

Գծապատկեր 4.



Հարցվողների 79%-ը՝ 109 ուսանող, նշել է, որ պրակտիկան պատշաճ էր կազմակերպված, 14%-ը՝ 19 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ և 4-րդ և «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» մասնագիտության 4-րդ կուրսերի ուսանողների կողմից: 3 միավոր կրկին նշվել է «Սերվիս» մասնագիտության 1-ին, 2-րդ և հեռակա բաժնի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 5-րդ կուրսերի ուսանողների կողմից: 2, 1 միավորներ չեն նշվել հարցվողների կողմից:

4.4. Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար:

Գծապատկեր 5.



Հարցվողների 60%-ը՝ 83 ուսանող, նշել է, որ պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար, 29%-ը՝ 40 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է առկա բաժնի «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», առկա և հեռակա բաժինների «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների կողմից, ինչը պայմանավորված է ուսանողների ավարտական աշխատանքի հետազոտական մասը գրելու խնդիրների հետ, քանի որ պրակտիկայի ընտրված ժամանակահատվածը չի համապատասխանում հանրակրթական դպրոցում ակտիվ դասերի անցկացման ժամանակահատվածի հետ: Հարցվողների 11%-ը՝ 15 ուսանող, 3 միավոր է նշել, ցածր միավոր կրկին նշվել է «Սերվիս» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի և «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների կողմից:

4.5. Որքանո՞վ էր արդյունավետ պրակտիկան:

Գծապատկեր 6.



Հարցվողների 81%-ը՝ 112 ուսանող, նշել են, որ պրակտիկան արդյունավետ էր կազմակերպված նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերման առումով, 15%-ը՝ 21 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է առկա և հեռակա բաժինների «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», ավարտական կուրսերի, առկա բաժնի «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու գրականություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների կողմից, 3 միավոր կրկին նշվել է «Սերվիս» մասնագիտության ուսանողների կողմից:

4.6.Պրակտիկայի անցկացման ընթացքը վերահսկվում էր ամբիոնի կողմից:

Գծապատկեր 7.



Հարցվողների 84%-ը՝ 115 ուսանող, նշել է, որ պրակտիկայի անցկացման ընթացքը վերահսկվում էր ամբիոնի կողմից, 14%-ը՝ 19 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Համակարգչային ճարտարագիտություն», «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի», «Տնտեսագիտություն» մասնագիտությունների մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների կողմից: 3 միավորներ նշել են հեռակա բաժնի «Կենսաբանություն», «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողները:

4.7.Գործատուները հետևողական են պրակտիկայի կազմակերպման ընթացքին:

Գծապատկեր 8.



Հարցվողների 83%-ը՝ 114 ուսանող, նշել է, որ պրակտիկայի կազմակերպման ամբողջ ընթացքում գործատուները հետևողական էին պրակտիկայի ընթացքին, կարևորում էին պրակտիկայի արդյունքում ուսանողների նոր հմտությունների և կարողությունների ձեռքբերումը: 11%-ը՝ 15 ուսանող, հարցին տվել են 4 միավոր պատասխանը, որը հիմնականում նշվել է առկա բաժնի «Համակարգչային ճարտարագիտություն», առկա և հեռակա բաժինների «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Իրավագիտություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների կողմից: Հարցվողների 6%-ը՝ 8 ուսանող, հարցին տվել է 3 միավոր պատասխանը: Ցածր միավորներ հիմնականում նշել են «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Անգլերեն լեզու գրականություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողները:

2. Խնդրում ենք ներկայացրեք Ձեր առաջարկությունները, նկատառումները, պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացը բարելավելու համար:

Հարցին ի պատասխան հարցվողները նշել են.

1. Պրակտիկան կարևոր նշանակություն ունի ուսանողների համար, որի արդյունքում ուսանողները ձեռք են բերում բավարար գործնական գիտելիքներ, առաջարկում եմ, որպեսզի պրակտիկայի ղեկավարներն ընդառաջեն ուսանողին աշխատանքի ընդունվելու կապակցությամբ, ինչը ավելի կշահադրդի ուսանողներին:
2. Պրակտիկայի ղեկավար նշանակել միայն մասնագետների:
3. Մանկավարժական պրակտիկայի տեղեկությունն ավելացնել:
4. Արտադրական պրակտիկայի ընթացքում գործնական աշխատանքներ հանձնարարել:
5. Ավարտական կուրսում մանկավարժական պրակտիկայից առաջ կազմակերպել ընդհանուր քննարկում, ծանուցում, որպեսզի ուսանողը կարողանա պատկերացնել ի՞նչ է պրակտիան, ի՞նչ պարտականություններ ունի ուսանողը և ղեկավարը:
6. Մանկավարժական պրակտիկայի ղեկավար նշանակել համապատասխան մասնագետների:
7. Առաջարկում եմ մանկավարժական պրակտիկաները կազմակերպել ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:
8. 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան սկսել մարտ ամսից:
9. Նախքան մանկավարժական պրակտիկան կազմակերպելը ուսանողներին պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ բաժանել կամ առանձին հանդիպում կազմակերպել:
10. Ավելացնել արտադրական պրակտիկայի տևողությունը:
11. Առաջարկում եմ ավարտական կուրսերում մանկավարժական պրակտիկան սկսել ավելի վաղ, կարևորել ակտիվ պրակտիկան:
12. Պրակտիկանտները թող գնահատվեն համապատասխան իրենց գիտելիքների և կազմած թղթապանակների:
13. Ցանկալի կլինի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան սկսել ավելի վաղ:
14. Պրակտիկան սկսել փետրվար ամսից:
15. Արտադրական պրակտիկայի արդյունավետության բարձրացման տեսանկյունից այն պետք է անցացնել մի քանի կազվակերպություններում և մինչև սկսելը համոզված լինել, որ ուսանողների համար կան հստակ պրակտիկայի անցկացման կարգ:
16. Ցանկալի էր պրակտիկան անցկացնել ոչ միայն նախաավարտական շրջանում:
17. Խնդրում եմ պրակտիկաների անցկացման համար տրամադրել

տրանսպորտային միջոց:

18. Առաջարկում եմ չորրորդ կուրսի երկրորդ կիսամյակը լիովին տրամադրել պրակտիկային:
19. Միայն հանրակրթական դպրոցներում պրակտիկա անցկացնելն ուսանողի համար հետաքրքիր չէ:
20. Հստակ սահմանել ուսանողի և ղեկավարի պարտականությունները:
21. Կապ պահպանել պրակտիկանտի հետ:

IV. Եզրակացություններ, առաջարկություններ

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակից ուսանողների մեծ մասը գոհ է ԳՊՀ-ում պրակտիկաների կազմակերպման ընթացքից: Հարցվողների մեծ մասը պրակտիկան անցկացրել է պետական կառույցներում՝ հիմնանում հանրակրթական դպրոցներում և ոստիկական համակարգում, քննչական մարմիններում:

Պրակտիկայի կազմակերպման ընթացքը գնահատող հարցաթերթի յոթ հարցերի պատասխանների արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք նշել, որ բացասական պատասխաններ, անբավարար միավոր նշվել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի Սերվիս բաժնի ուսանողների կողմից, ովքեր առաջարկում են արտադրական պրակտիկան կազմակերպելիս տրամադրել տրանսպորտ:

Գավառի պետական համալսարանում մանկավարժական, արտադրական, նախաավարտական, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների կազմակերպման գործընթացի արդյունավետության գնահատման համար կարևոր են նաև բաց հարցերը, որտեղ որպես առաջնահերթություններ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Անգլերեն լեզու և գրականություն, Հայոց լեզու և գրականություն բաժինների համար առաջարկվում է պրակտիկան կա՛մ սկսել առաջին կիսամյակում, կա՛մ նախատեսված ժամանակահատվածը ավելացնել:

ԳՊՀ որակի ապահովման բաժինը, ամփոփելով հարցման արդյունքները, առաջարկում է 2024-2025 ուսումնական տարվա համապատասխան պրակտիկաների կազմակերպման ընթացքում հաշվի առնել հարցման արդյուքները և ուսանողների առաջարկություններն ու նկատառումները:

Պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: